



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



**TRANSPARENCY  
INTERNATIONAL**  
anticorruption center



**ENGAGED  
CITIZENRY  
RESPONSIBLE  
GOVERNANCE**



«ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՀԱՐՄՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ-Ի (Շամլուղի պղնձի հանքավայր) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔԵՐ  
ԱԽԹԱԼԱ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
Հունիս 2019

Իրականացնող՝ ՓԳԹ Անահիտ Մկրտչյան  
«Համայնքային փոխօգնություն» Սոցիալական ՀԿ ղեկավար



ԵՐԵՎԱՆ, հունիս 2019

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ ԱՃԹՆ գործընթացի լիարժեք մասնակիցներ» դրամաշնորհային ծրագրի նպատակն է ապահովել ԱՃԹՆ-ի ստանդարտի 1-ին պահանջի 1.3 կետի (Քաղաքացիական հասարակության մասնակցություն), 7-րդ պահանջի 7.1 կետի (Հասարակական դեբատների անցկացում) և Քաղաքացիական հասարակության մասնակցության արձանագրության 2.5 կետի (Հասարակության կողմից որոշումների կայացման գործընթացի ապահովում) կատարումը:

Որպես ծրագրի թիրախ ընտրված Լոռի, Գեղարքունիք, Սյունիք մարզերի հանքարդյունաբերությանն առնչվող համայնքներից (Լոռու մարզի Ախթալա (+Ճոճկան, Մեծ Այրում ), Շնող (+Թեղուտ), Գեղարքունիքի մարզի Սոտք, Սյունիքի մարզի խոշորացված Կապան համայնք (Գեղանուշ) Քաջարան համայնք (Արծվանիկ, Սյունիք), Մեղրի համայնք (Ագարակ) չորրորդ այցելությունը կազմակերպվել է դեպի Ախթալա խոշորացված համայնքի բնակավայրեր: Տես քարտեզ N1



Քարտեզ 1 Լոռվա մարզ, Ախթալա խոշորացված համայնք

Լոռու մարզի Ախթալա խոշորացված համայնքը ձևավորվել է 2017 թվականի հունիսի 9-ին<sup>1</sup> և իր մեջ ներառում է Ախթալա և Շամլուղ քաղաքները և Բենդիկ, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց և Փոքր Այրում գյուղերը: Նոր միավորման բնակչությունը կազմում է 6,492 մարդ:

<sup>1</sup> <http://mtad.am/hy/18hamynqner/>

Համայնքի գյուղական բնակավայրերում զբաղվում են գյուղատնտեսությամբ, հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ, ինչպես նաև՝ մանր ու խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվապահությամբ (վերջինս կոմբինատի արտանետած տոքսիկ նյութերի ազդեցության հետևանքով գրեթե ոչնչացվել է):

Համայնքի արդյունաբերական մասնագիտացման ճյուղը մետաղագործությունն է «Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունով, որը շահագործում է Շամլուղի պղնձի հանքավայրը: Հանքավայրը, որի շահագործման պատմությունը սկսվել է 1770 թվականից, գտնվում է Ախթալա քաղաքից մոտ 10 կմ հեռավորության վրա:



**«Պղնձի մեխակ» պայմանական անուն ստացած ծաղիկ Շամլուղի հանքավայրի շրջակայքից**

2002թ-ից «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն Շամլուղի պղնձի հանքավայրի շահագործումն իրականացնում է հիմնականում ստորգետնյա եղանակով, տարբեր մակարդակներից բացված հանքուղիների միջոցով: Վերջին տասնամյակում մակերևույթին մոտ տեղադրված հանքավայրի առանձին տեղամասը շահագործվում էր նաև բաց եղանակով:



[www.akhtala.am/templates/kopenhagen/images/Header.jpg](http://www.akhtala.am/templates/kopenhagen/images/Header.jpg), CC BY-SA 4.0

2019թ. 1-ին եռամսյակի դրությամբ Ախթալայի համայնքապետարանում ներդրված է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ /ՀԿՏՀ/ և «Մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքով գործող քաղաքացիների սպասարկման գրասենյակ: Համայնքապետարանն ունի 34 հաստիք, (այդ թվում՝ իրավաբանի և սոցիալական աշխատողի) և 10 ավագանու անդամ: Ավագանին մշտական հանձնաժողովներ չունի, իսկ սոցիալական աշխատողը բնակչության խոցելի խմբերի ներկայացուցիչների կարիքի ուսումնասիրության նպատակով ոչ մի տնային այցելություն չի իրականացրել:

Ախթալա խոշորացված համայնքի Փոքր Այրում, Մեծ Այրում բնակավայրերը փախստականաբնակ են, որի պատճառով նաև նրանց սոցիալական խնդիրներն առավել սրված են: Այս բնակավայրերի խմելու ջրի մաքրության, ոռոգման ջրի բացակայության և գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասի անապատացման հիմնախնդիրներն ուղղակիորեն ազդում են համայնքի հետագա գոյության վրա<sup>2</sup>:

2019թ. հունվարի տվյալներով 6,492 բնակիչ ունեցող Ախթալա խոշորացված համայնքն ունի ռիսկի խմբերի հետևյալ պատկերը. Տես աղյուսակ 1.

---

<sup>2</sup> <https://operativ.am/?p=249746>

## Աղյուսակ N1

Բնակավայրի անվանում	Սոցիալական նպաստ (մարդ)	Նպաստ (մարդ)
1. Ախթալա	32	25
2. Շամլուղ	21	14
3. Ճոճկան	3	23
4. Մեծ այրում	11	33
5. Փոքր Այրում	3	0
	70	95 <sup>3</sup>

Համայնքի խոշորացումից հետո բոլոր հինգ բնակավայրերում իրականացվում են ենթակառուցվածքների նորոգման աշխատանքներ:

### ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Խոշորացված Ախթալա համայնքի տարբեր բնակավայրերի վրա «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի (Շամլուղի պղնձի հանքավայր) գործունեության սոցիալական ազդեցությունների, բնակչության իրազեկվածության ու ԱՃԹՆ-ի գործընթացում ընդգրկվելու մասնակցային վարքի ձևավորման հնարավորությունների բացահայտման խնդրի լուծմանն ընդառաջ ընտրվել է խորին հարցազրույցի մեթոդը: Որպես գործիք ընտրվել է հարցազրույցի ուղեցույցը, որի բաժիններն են.

1. հանքի շահագործման դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները
2. ընտրված համայնքների կենսագործունեության վրա հանքի ազդակիր համայնքների օդին, ջրին, հողին հասցված վնասների գնահատականները
3. բնակիչների՝ սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման հարցերում

<sup>3</sup> [http://www.mlsa.am/?page\\_id=368](http://www.mlsa.am/?page_id=368)

4. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները և հանքի շահագործման հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարման վերաբերյալ բնակիչների առաջարկությունները

Որպես հարցման օբյեկտ ընտրվել են Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում բնակավայրերը: Հարցազրույց վարվել է 29 տնային տնտեսություններում (այսուհետ՝ SS): Հարցազրույց վերցվել է 19-ը իգական և 10-ը արական սեռի ներկայացուցիչ, հետևյալ տարիքային խմբերից՝ 18-25՝ 5 տնային տնտեսության ներկայացուցիչ, 26-35՝ 8, 36-45՝ 11, 46-55՝ 3, 56 և ավելի՝ 2 տնային տնտեսության ներկայացուցիչ:

Հարցազրույցին մասնակցել են մի քանի մասնագիտական խմբերի ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀԿ անդամներ, ուսանողներ, տնային տնտեսուհիներ, գործազուրկներ:

Տնային Տնտեսություններում մեր կողմից իրականացված խորին հարցազրույցները բացահայտեցին, որ

- «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի (Շամլուղի պղնձի հանքավայր) գործունեության վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները համայնքային ժողովները, տեղեկատվական թերթիկները և քննարկումներն են եղել: Նրանք, ովքեր մասնակցել էին այդ միջոցառումներին (29 տնային տնտեսություններից 17-ը), պնդում են, որ Կոմբինատը նախապես չի տեղեկացրել իր գործունեության արդյունքում համայնքի վրա հնարավոր բացասական սոցիալական ազդեցությունների մասին, որոնք, սակայն, այսօր տեսանելի և սուր արտահայտված են:
- Բացասական ազդեցությունները հատկապես վերաբերում են օդի մաքրությանն ու գյուղատնտեսական նշանակության հողերի քանակին, արտադրանքի որակին, որոնք աղտահարվում են ծանր մետաղներով՝ հանգեցնելով բնածին անոմալիաների, զարգացման շեղումների, սոմատիկ խրոնիկական և էնդոկրին հիվանդությունների և իմունային համակարգի թուլացմանն ու ընդհանուր հիվանդացության մակարդակի աճին: Հատկապես տուժում են երեխաները:

➤ Կոմբինատի գործունեության սոցիալական ազդեցությունների կանխարգելման կամ հաղթահարման գործընթացներում տարածաշրջանի ՀԿ-ների ակտիվության մասին գնահատականները գոհացուցիչ չեն, որովհետև տարածաշրջանում կոնկրետ հանքարդյունաբերության սոցիալական վնասներով զբաղվող միայն մեկ կազմակերպություն է գործում: Սա մտահոգիչ վիճակ է, քանզի ԱՃԹՆ-ի ներդրմամբ ՀԿ սեկտորին մեծ դեր է հատկացված: Տեղական ՀԿ-ների և տնտեսության մասնավոր հատվածի միջև երկխոսության խթանումը նպատակ ունի ապահովելու կառավարության կողմից հանրային հարստության օգտագործումից առաջացած եկամուտների տնօրինման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

➤ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքից հարցազրույցի մասնակիցներից տեղյակ էին հազիվ 1/3-ը, այն էլ ՀԿ անդամներ, գյուղապետարանի երկու աշխատակից և մի քանի քաղաքացիական ակտիվիստ:

Բնակչության շրջանում տեսանելի են ֆրուստրացիոն վիճակ, իրականությունը նույնական ընկալելու դժվարություն, ինչպես նաև սեփական իրավունքները պաշտպանելու թույլ նախաձեռնողականություն: Կոմբինատի գործունեության հարուցած սոցիալական խնդիրները բնակիչներն ավելի շուտ ուղղում են երևանյան իշխանություններին, քան փորձում են խորհել դրանց կանխման գործում իրենց հնարավոր մասնակցության, ՏԻՄ-ի հետ համագործակցությամբ ծրագրերի մշակման և դրանց իրականացման, վերահսկման մեխանիզմների մասին:

Կոմբինատի գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու ուղղությամբ Ախթալա խոշորացված համայնքի մի քանի բնակավայրերի ՏՏ-ները կատարել են առաջարկություններ՝ ուղղված առողջապահության նախարարության կողմից իրենց պաշտպանությանը, առողջությանը հասցված վնասների վերացմանն ուղղված հարստացված սննդի երեխաներին մատակարարմանը, Կոմբինատի գործունեության բնապահպանական նորմերին համապատասխանության ստուգմանը և հասցված վնասների դիմաց տուգանքների չափի ավելացմանը:

Հենվելով բնակչության կարծիքների, առաջարկությունների ու մեր դիտարկումների վրա ձևակերպվել են հետևյալ առաջարկությունները՝

1. Հստակեցնել խոշորացված Ախթալա համայնքի տարբեր բնակավայրերի վրա «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի (Շամլուղի պղնձի հանքավայր) գործունեության վնասակար ազդեցությունների կրման աստիճանը/չափը, կանխել գումարներն ուղղորդելու և օգտագործելու հարցում ՏԻՄ հնարավոր սուբյեկտիվությունը, ապահովել բնակչության կողմից ծրագրերի իրականացման վերահսկելիությունը:
2. Համայնքի զարգացման ռազմավարական ծրագրում հատկացնել հատուկ բնապահպանական բաժին՝ մշակված համայնքի ակտիվիստների, ՀԿ անդամների կողմից, հաստատված Ավագանու խորհրդի կողմից:
3. Կոմբինատի հաշվին նախադպրոցական և դպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի տրամադրել ուժեղացված սննդամթերքի ամենօրյա փաթեթ՝ ըստ երեխաների առողջության վրա թողնված վնասների:
4. Իրականացնել տարածաշրջանում առկա աշխատուժի գնահատում, տեղում հանքին այլընտրանք աշխատատեղերի հնարավորությունների բացահայտում, միջին մասնագիտական ուսումնարանների վերապրոֆիլավորում կամ ստեղծում և այդ աշխատանքների պլանավորում:
5. Սկսել հաջող ռեկուլտիվացիայի աշխատանքներ՝ միտված համայնքին սեփական հողերի վերադարձմանը:
6. ՀԿ ռեսուրսը օգտագործել գրագետ բնակչության գիտակցված մասնակցային վարքի ձևավորման, ԱՃԹՆ գործընթացներում նրա ընդգրկվելու հնարավորությունը մեծացնելու, ՀԿ-բնակչություն-կոմբինատի ղեկավարություն ուղիղ քննարկումներ կազմակերպելու գործում:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ



**ԱՌԱՋԻՆ. Հանքի շահագործման դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ բնակչության նախնական տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները:**

2019թ. հունիսին Ախթալա խոշորացված համայնքի 29 տնային տնտեսություններում իրականացված խորին հարցազրույցները բացահայտեցին, որ «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի (Շամլուղի պղնձի հանքավայր) գործունեության վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները համայնքային ժողովները, տեղեկատվական թերթիկները և քննարկումներն են եղել: Դրանց մասնակցել էին մեր հարցազրույցում ընդգրկված 29 տնային տնտեսություններից 17-ը: Նրանց հավաստմամբ, այս միջոցառումների ընթացքում Կոմբինատը նախապես չի տեղեկացրել իր գործունեության արդյունքում համայնքի վրա հնարավոր բացասական սոցիալական ազդեցությունների մասին: Սակայն այդ բացասական ազդեցությունները տեսանելի են և սուր արտահայտված, ինչը բնակիչները քննադատության են արժանացրել: Տես աղյուսակ 2

Աղյուսակ N2

	Մեծ բացասական ազդեցություն	Որոշ բացաս. ազդեցություն	Ոչ մի ազդեցություն	Որոշ դրական ազդեցություն	Մեծ դրական ազդեցություն	Դժվ. պատասխանել
1. Խմելու ջրի մաքրություն	6	9	3	0	0	11
2. Օդի մաքրություն	<b>19</b>	<b>10</b>	0	0	0	0
3. Ոռոգման ջրի մաքրություն	12	7	3	0	0	7
4. Բանջարեղենի և մրգի <u>որակ</u>	11	10	2	0	0	6
5. Համայնքային և միջհամայնքային ճանապարհների որակ	8	11	3	0	0	7
6. Գյուղատնտեսական նշանակության հողերի քանակ, որակ	<b>18</b>	<b>6</b>	0	1	0	4
7. Աշխատատեղեր	0	0	0	<b>20</b>	<b>6</b>	3
8. Ձեռնարկության աշխատողների ապահովագրություն	0	0	13	2	2	12
9. Համայնքի խոցելի խմբերի աջակցություն	0	0	16	2	0	11

Աղյուսակից երևում է, որ հարցազրույցի մասնակիցների 90%-ը աշխատատեղերին վերաբերող 7-րդ կետում (աշխատատեղերի տրամադրում) նշում

է Կոմբինատի կողմից 500-600 տեղացիների աշխատանքով ապահովելու միակ դրական ազդեցությունը:

Մնացած բոլոր տողերում մենք ունենք հանքի գործունեության արդյունքում բնության ու մարդկանց վրա բացասական սոցիալական ազդեցությունների գնահատական: Հատկապես մեծ են SS դժգոհությունները օդի և գյուղատնտեսական նշանակության հողերի քանակի կրճատումից, գյուղատնտեսական արտադրանքի որակից (82-100%): Ասվածի ապացույցն է մի ընտանիքում իրենց վիճակի վերաբերյալ արված հետևյալ մեկնաբանությունը. «Մեր բուսական և կենդանական աշխարհը քայքայվում է՝ մեղուները ոչնչացել են, այգիները չորանում են, անտառապատ տարածքները նոսրանում: Տնային կենդանիները հերթով սատկում են, ու պատճառները չեն ուսումնասիրվում: Բերքը, կենդանին, թունավորվում է՝ մենք էլ հետը»:

Այս խոսքերի ճշմարտացիությունը հավաստում են մասնագիտական հետազոտությունները, որոնք պարզել են, որ ծանր մետաղներով (պղինձը (Cu), ցինկը (Zn), կապարը (Pb), սնդիկը (Hg), կադմիումը (Cd), արսենը (As) և այլն) շրջակա միջավայրի աղտոտումը կարող էր պատճառ հանդիսանալ բազմաթիվ ախտահարումների: Օդի, ջրի, հողի միջոցով անցնելով սնման շղթա՝ այս նյութերն առաջացնում են բնածին անոմալիաներ, զարգացման շեղումներ, սոմատիկ խրոնիկական և էնդոկրին հիվանդություններ և իմունային համակարգի թուլացմանն ու ընդհանուր հիվանդացության մակարդակի աճ: Հատկապես խոցելի են Ախթալայի բնակավայրերի երեխաները, որոնց շրջանում տարածված են զարգացման, խոսքի դանդաղության, կենտրոնացման ու հիշողության թուլացման երևույթները կամ հիպերակտիվության դրսևորումները: Ծանր մետաղների երկարատև էֆեկտները խախտում են օրգանիզմի հիմնարար ֆունկցիաները՝ վերարտադրությունը և ժառանգականությունը<sup>4</sup>: Դրանում մեծ վնասակար դեր ունեն հանքաքարի վերամշակման արդյունքում ձևավորված Մեծ Այրում և Ճոճկան գյուղերի միջակայքում գտնվող Նահատակի և տարածաշրջանի ևս մի քանի այլ պոչամբարները:

---

<sup>4</sup> ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի (ՔԳՀԱՇ ՆԱԽԱԳԻԾ), ՀՀ գյուղմթերքի ծանր մետաղներով աղտոտվածության ռիսկի գնահատում, Երևան, 2011:



Նահատակի Պոչամբարը

Դեռևս 2015թ-ին փորձագիտական ուսումնասիրությունները բացահայտել են, որ հատկապես այս պոչամբարի գոյության արդյունքում դեղձի նմուշների 60-70 տոկոսում կապարի պարունակությունը 2-4 անգամ գերազանցում է թույլատրելի սանիտարական և առողջապահական նորմը<sup>5</sup>: Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից 2013թ. օգոստոսից 2014թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում իրականացված հետազոտությունները բնակիչների արյան մեջ կապարի միջին պարունակությունը գրանցել էին 6.0 մկգ/դլ, իսկ Ախթալայի երեխաների արյան նմուշներում կապարի մակարդակը կազմել է 6.8 մկգ/դլ<sup>6</sup>:

Ամփոփելով ասենք, որ Ախթալայի խմելու և հատկապես ոռոգման ջրերի խնդիրը շատ լուրջ է Մեծ Այրում, ճոճկան բնակավայրերում :

Շամլուղում և Ախթալայում հիմնական աղտոտման աղբյուրը քամին է, օդի աղտոտումը, կիսաքանդ ճանապարհներն ու պայթեցումների հետևանքները:

Եթե անդրադառնանք N2 աղյուսակի իններորդ՝ խոցելի խմբերին Կոմբինատի աջակցության կետին, ապա կնկատենք, որ մեր հարցազրույցին մասնակցած 29 տնային տնտեսությունից 15-ը հանքի կողմից առ այսօր չի տեսել իր իսկ վնասները հաղթահարելու որևէ քայլ, իսկ 11-ն էլ բոլորովին անտեղյակ է նման ծրագրերից:

Խորին հարցազրույցը բացահայտեց, որ «խոցելի խմբերին աջակցության» տակ ախթալեցիները ակնկալում են ծանր առողջական վիճակում հայտնվածների բուժման ֆինանսավորում: Համայնքի միջին վիճակագրական բնակչի մակարդակով մենք նկատեցինք ֆրուստրացիոն վիճակ, իրականությունը նույնական ընկալելու դժվարություն, ինչպես նաև սեփական իրավունքները պաշտպանելու նախաձեռնողականության կրավորականություն: Հարցազրույցի

<sup>5</sup> <https://www.ecolur.org/hy/news/water/--/10016/>

<sup>6</sup> Ռ. Գրիգորյան, Վ. Պետրոսյան, Ծ.Մելքունյան, 'Հայաստանի հանքարդյունաբերական և մետալուրգիական համայնքներում երեխաների համար ռիսկի գործոնները՝ պայմանավորված արյան մեջ կապարի մակարդակով, հեղինակներ՝:

գրեթե բոլորը մասնակիցների, որոնք համայնքի տարբեր բնակավայրերի, տարիքի, սեռի ներկայացուցիչներ էին, միակ հնչեցված պահանջը բուժման գումարով օգնելու պահանջն էր, և բնավ ոչ հանքին ստիպելը պակասեցնել կամ չեզոքացնել թունավոր նյութերի տարածումը հարակից բնակավայրերի վրա:

Հարցազրույցի մասնակիցների մեծ մասի համար նորություն էր կոմբինատի գործունեության սոցիալական բացասական ազդեցությունների կանխարգելմանն ուղղված այնպիսի գործողություններ, ինչպիսիք էին «Թափոնների անվտանգ հեռացումը», «Հատուկ պոլիգոնների ստեղծումը», «Գործող աղբավայրերի բարելավումը», «Աղտոտված տարածքների մաքրումն ու վերականգնումը», «Դեպի ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի արտահոսքի նվազեցում, կասեցում, ջրային ռեսուրսների պահպանությունը», «Կեղտաջրերի վերամշակում, կոյուղու համակարգի բարելավումը», «Օդի մաքրության պահպանությունը», «Աղմուկից, վիբրացիայից և ճառագայթահարումից պաշտպանությունը», «Աղտոտված հողի մաքրում, աղտոտող նյութերի վնասազերծումը», «Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբանական ռեսուրսների պահպանությունը», «Տեղեկատվության տարածումը, էկոլոգիական կրթությունը», «Բնակչության առողջական վիճակի զննությունների իրականացումը» և «Անհրաժեշտ բժշկական սարքավորումների տրամադրումն» է: Սրանք գործողություններ են, որոնցից ուղղակիորեն կախված է մարդկանց առողջությունը և բնակչության առջև կոմբինատի հաշվետվողականությունն ու պատասխանատվությունը:

Հարցազրույցներից և ոչ մեկի ընթացքում չլսեցինք վերջին 3-5 տարում համայնքում իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող նշված ուղղություններով գեթ մեկ ծրագրի մասին: Նշենք միայն, որ համայնքապետարանից տեղեկացանք, որ վերջին երկու տարվա համար Կոմբինատը Կորպորատիվ Սոցիալական պատասխանատվության ծրագրով <sup>7</sup> 60 մլն դրամ է տրամադրել Ախթալայում

---

<sup>7</sup> Ըստ Համաշխարհային բանկի՝ ԿՍՊ-ը մասնավոր ընկերությունների՝ կայուն տնտեսական զարգացմանն աջակցելու պատրաստակամության դրսևորումն է, որն իրականացվում է կազմակերպությունների աշխատակիցների, նրանց ընտանիքների, տեղական համայնքների և առհասարակ հասարակության հետ համագործակցելով, միևնույն ժամանակ օգուտ բերելով և՛ բիզնեսին, և՛ զարգացմանը:

կանաչ գորտու ստեղծման համար, որի վրա հաստ շերտով կշարունակեն նստել հանքի թունավոր արտազատումները և իմաստագրկել դրանց գոյությունը:

Կոմբինատի գործունեության սոցիալական ազդեցությունների կանխարգելման կամ հաղթահարման գործընթացներում տարածաշրջանի ՀԿ-ների մասնակցության չափը գնահատելու նպատակով տրված մեր հարցերին մարդկանց մոտ կեսը (14 պատասխան) «Մասամբ բավարար» են գնահատել այս ինստիտուտի ակտիվությունը: Միջինը 12 մարդ տեղյակ չէր մարզային ՀԿ-ների որևէ ուղղությամբ իրականացրած գործունեությունից: Սա բացատրվում է նրանով, որ չնայած մարզում գրանցված բազմաթիվ հասարակական կազմակերպությունների, կոնկրետ հանքարդյունաբերության սոցիալական վնասներով զբաղվում է միայն մեկ կազմակերպություն, որը միայնակ կամ երևանյան ՀԿ-ների հետ համատեղ զբաղվում է լուսավորչական գործունեությամբ և թեմատիկ քննարկումների կազմակերպմամբ: Ասվածը պարզ երևում է աղյուսակ N 3-ում.

Աղյուսակ N 3

Ուղղություններ	Լիովին անբավարար	«Մասամբ բավարար»	Լիովին բավարար	Տեղյակ չեմ, Դ/Պ
1. Համայնքների իրազեկում	0	14	2	13
2. Համայնքի անդամների հանքի գործունեության վերահսկման մեջ ներգրավում	10	5	2	12
3. Հանքի կողմից վճարվող բնապահպան. Վճարների նպատակային օգտագործման առաջարկների մշակում	10	6	3	13
4. Բազմաշահառու խմբերի ձևավորում, գործունեության ծավալման կազմակերպում	12	8	1	8
5. Բազմաշահառու խմբերի առաջարկությունների ձևակերպում	8	7	1	13

Հիշեցնենք, որ ԱՃԹՆ-ի ներդրմամբ ՀԿ սեկտորին մեծ դեր է հատկացված: Տեղական ՀԿ-ների և տնտեսության մասնավոր հատվածի միջև երկխոսության խթանումը կարող է ապահովել հանրային հարստության օգտագործումից առաջացած եկամուտների տնօրինման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

***ԵՐԿՐՈՐԴ. Մեփական իրավունքների մասին բնակիչների իրազեկվածությունը՝ հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ***

2001 թվականին ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը բնապահպանական վճարներից առանձին տողով հատկացումներ է անում այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն<sup>8</sup>:

Բնապահպանական վճարներից ազդակիր<sup>9</sup> համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները որպես նպատակային միջոցներ օգտագործվում են այդ համայնքների տարածքում՝ բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար:

Համայնքներն ազդակիր են համարվում ըստ հետևյալ չափանիշների՝

1. Ամրակայված աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետման մասով «ազդակիր» են համարվում այն համայնքները, որոնց վարչական տարածքներում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունները գերազանցում են ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված նորմատիվները:
2. Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտանետման մասով տվյալ ընկերության ազդակիր համայնքներ են համարվում այն համայնքները, որոնց վարչական տարածքում է գտնվում ջրային ռեսուրսը, որտեղ վնասակար նյութեր և (կամ) միացություններ է արտանետում տվյալ ընկերությունը:
3. Հատուկ հատկացված տեղերում ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների տեղադրման և պահման մասով տվյալ ընկերության ազդակիր համայնքներ են համարվում այն համայնքները, որոնց վարչական տարածքում տվյալ ընկերության կողմից տեղադրվում կամ պահվում են ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները:

---

<sup>8</sup> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Դ Ե Ն Ք Ը Ընդունված է 2001 թվականին, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին

<sup>9</sup> «Ազդակիր» են համարվում որևէ ընկերության գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքները

Համայնքների բյուջեներ մասհանումների չափը որոշվում են համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական վճարների հանրագումարից՝ պակասեցնելով այն բյուջետային տարվան նախորդող առաջին երկու տարիների կտրվածքով սույն օրենքով սահմանված կարգով համապատասխան համայնքներին կատարված մասհանումների չափով<sup>10</sup>:

Մինևույն ընկերության գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող մեկից ավելի համայնքների/բնակավայրերի դեպքում այդ ընկերության կողմից կատարված բնապահպանական վճարներից մասհանումները բաշխվում են **քոլոր համայնքների միջև**:

Ընկերության կողմից պետական բյուջե ամենամյա կատարվող բնապահպանական վճարներից ՏԻՄ-ը ստանում է դոտացիա և իրականացնում ծրագրեր բացառապես բնապահպանական կամ առողջապահական ծրագրերի համար:

Հարցազրույցների ժամանակ մենք արձանագրեցինք, որ

առաջին, ինչպես այս ծրագրի համար թիրախ հանդիսացող մյուս խոշորացված համայնքերում, այնպես էլ Ախթալայի խոշորացված համայնքի յուրաքանչյուր բնակավայրում բարձրացվել է իրենց բնակավայրի՝ մյուսների հանդեպ առավել ազդակիր լինելու և բնապահպանական վճարների և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության անվան տակ կոմբինատի կողմից հատկացվող գումարների բաշխման արդարության խնդիրը:

Երկրորդ, մենք պարզեցինք, որ բնակիչները հիմնականում տեղյակ չէին, որ բնապահպանական վճարներից օգտվելու համար իրենք պետք է ծրագիր ներկայացնեն իրենց համար այդ պահին գերակա բնապահպանական կամ առողջական խնդրի լուծման առնչությամբ: Իսկ ՏԻՄ-ն էլ բնապահպանական վճարներից օգտվելու համար ծրագրով դիմելու դեպքում պետք է քննարկում կազմակերպի համայնքում ու հավանություն ստանա բնակիչների կողմից: Մինչդեռ, բնակիչների շրջանում տպավորություն է ստեղծվում, որ իրականացված ծրագրերը

---

<sup>10</sup> ՀՀ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենք, Ընդունված է 2001 թվականի մայիսի 15-ին <sup>14</sup> Լոռու մարզպետարան

գյուղապետի շնորհքն է, ոչ թե ազդակիր համայնքի իրավունքի իրացման խնդրի լուծումը:

Մենք պարզեցինք, որ մինչև խոշորացումը Շամլուղը բնապահպանական կամ առողջապահական ծրագրեր չի ներկայացրել ՀՀ կառավարությանը սուբվենցիաներ ստանալու համար: Շամլուղի նախկին քաղաքապետի պատճառաբանությամբ գումարը փոքր է եղել, դրա համար չեն դիմել:

Ախթալան օգտվել է սուբվենցիաներից<sup>11</sup>: 2016թ-ին Ախթալա համայնքին հատկացվել է 4 588 000 դրամի սուբվենցիա բնապահպանական և առողջապահական ծրագրերի համար, իսկ 2017թ-ին 1 874 000 դրամ: 2017թ-ին 416 000 դրամ հատկացվել է արդեն խոշորացված Ախթալայի Մեծ Այրում բնակավայրին աղբահանության կազմակերպման համար, 1 192 000 դրամ ճոճկան բնակավայրում և 266 000 դրամ Մեծ Այրում բնակավայրում առողջապահական միջոցառումների իրականացման համար:

Երրորդ, խոշորացված Ախթալա համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում թե բնակիչների, թե ՏԻՄ ներկայացուցիչների կողմից բարձրացվել է հարկերի չափի ավելացման հարցի հրատապությունը, քանզի նրանք վստահեցնում են, որ Կոմբինատի հասցված սոցիալական բացասական ազդեցությունները շատ և շատ անգամներ գերազանցում են վճարների չափը: Ավելին, Ախթալայում մի քանիսից լսեցինք, որ բնապահպանական վճարից հատկացված գումարը ծախսվում է ոչ բնապահպանական/առողջապահական նպատակներով և Նախարարությունը դրան չի ընդդիմանում: Սա հավելյալ ստուգման կարիք ունի:

Չորրորդ, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքից տեղյակ էին հարցազրույցի մասնակիցներից 8-ը (ՀԿ անդամներ, գյուղապետարանի երկու աշխատակից և մի քանի քաղաքացիական ակտիվիստներ), որոնք էլ հստակ նկարագրել են օրենքի օգտակարությունը համայնքի համար: Օրենքից անտեղյակները կազմում են հարցազրույցի մասնակիցների կեսը, մնացած 6-ը իրենց գնահատմամբ «մասամբ» տեղյակ էին, սակայն նրանցից միայն երկուսը մոտավորապես ներկայացրեցին օրենքի բովանդակությունը:

---

<sup>11</sup> Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույց 2018



*ԵՐՐՈՐԴ.*

*ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու*

*հնարավորությունները:*

ԱՃԹՆ-ի նպատակն ավելի թափանցիկ և հաշվետվողական պետական և գործարար համակարգի ստեղծումն է, հանրային երկխոսության խթանումը, դրանով իսկ կողմերի միջև փոխընթերցման երաշխավորումը: ԱՃԹՆ-ի ներդրումը հստակ ազդանշան է հաղորդում ավելի բարձր աստիճանի թափանցիկության ապահովման պարտավորություն ստանձնելու մասին:

Կոմբինատի ընդհանուր գործունեության վերահսկման, թափանցիկության ապահովման նախաձեռնության, զեկույցների քննարկման, որոշումների կայացման գործընթացներում բնակիչների ներգրավվածությանը վերաբերող հարցին ախթալեցի 29 տնային տնտեսությունից միայն 6-7-ը կարծիք հայտնեց «մասամբ ներգրավվածության» մասին: Հիմնականում սովորական քաղաքացիները կամ վստահաբար պատասխանում էին, որ նշված ուղղություններով գործընթացներին չեն մասնակցում, կամ տեղյակ չեն, թե մյուսներն արդյոք մասնակցում են, թե՛ ոչ:

Օրենքների թույլ իմացությունը և նախաձեռնողականության ցածր մակարդակի վկայություն է Կոմբինատի գործունեության հետևանքով առաջացած սոցիալական խնդիրների լուծման առնչությամբ բնակիչներից հնչած «պետությունը թող անի» արտահայտությունը: Նրանք բնավ անտարբեր էին իրենց բնակավայրի/համայնքի խնդիրները ձևակերպելուն ու Կոմբինատի կամ պետական մարմինների առջև դրանց բարձրացմանն ու լուծմանը հետամուտ լինելու քայլերի ձեռնարկման հանդեպ: Նրանք չէին ցանկանում խոսել Կոմբինատի գործունեության բացասական ազդեցությունների կանխարգելման մասին, որովհետև այս պահին նրանց հետաքրքրում է բուժման ծախսերի փոխհատուցումն ու հարկերի, սուբվենցիաների չափի մեծացումը՝ և այն էլ ուղիղ համայնքին փոխանցելով, քանզի որևէ հրատապ ծրագրի հաստատումն ու ֆինանսների հատկացումը մոտ մեկ տարի է ձգվում:

Մենք նկատեցինք, որ ընտանիքի առողջական խնդիրներն ինքնուրույն լուծելու մարդկանց ճիգերը նրանց, որպես սոցիալական միավոր, մասնատել է, իսկ բնապահպանական խնդիրներով զբաղվող մարզային ՀԿ-ների գրեթե բացակայությունը բարդացրել ԱՃԹՆ գործընթացներում նրանց գիտակցված

ընդգրկման հնարավորությունը: Ընդհանուր առմամբ հանք-բնակիչ հարաբերություններում համայնքի անդամի ինքնորոշման բացակայությունը և բնապահպանական/առողջապահական հարցերում չձևավորված մասնակցային վարքը տեղիք է տալիս մտածելու, որ ՀԿ մեծ ջանքեր կպահանջվեն նրանց ակտիվացնելու ու նպատակի շուրջ համախմբելու համար:

Կոմբինատի գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու ուղղությամբ Ախթալա խոշորացված համայնքի մի քանի բնակավայրերի Տնային Տնտեսությունների առաջարկություններից կարողացանք այսպիսի շարք առանձնացնել՝

1. Առողջապահության նախարարության կողմից իրականացնել բնակիչների խորքային բուժզննում, վիճակի անընդմեջ վերահսկում:
2. Վերանայել բնապահպանական վնասների դիմաց տուգանքների չափը, բնապահպանական վճարներից հատկացումներն անել ըստ բնակավայրի հանքից տուժելու աստիճանի՝ հետագա հստակեցում մտցնելով ռիսկայնության աստիճանների որոշման խնդրում:
3. Որոշել երեխաներին անհրաժեշտ հարստացված սննդի չափաբաժինը և կազմակերպել դրանց ամենօրյա տրամադրումը մանկապարտեզներին, դպրոցներին:
4. Ապահովել բնակչության մասնակցությունը Կոմբինատի գործունեության բնապահպանական նորմերին համապատասխանության ստուգման գործընթացներին:
5. Գնահատել համայնքային քանդվող ճանապարհների վիճակը և կազմակերպել հանքի կողմից դրանց լիակատար կառուցումը:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ծրագրով նախատեսված խորին հարգազրույցը մեզ հնարավորություն տվեց եզրակացություններ անել առ այն, որ.

- A. Բնակիչների թույլ պատկերացումները հանքի գործունեության սոցիալական բացասական ազդեցությունների ողջ գունապնակի մասին հետևանք է բնությանն ու մարդկանց հարուցած վնասների և Կոմբինատի գործունեության ուղիղ կապի մասին գիտական հետազոտությունների բացակայության, կամ արդյունքների անհասանելիության:
- B. Միջին վիճակագրական բնակչի թույլ տեղեկացվածությունը Կոմբինատի գործունեության հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման և առկա վնասների չեզոքացման մասին, համայնքի և առանձին տնային տնտեսության իրավունքերը պաշտպանելու օրենքներից ու դրա կիրարկման ընթացակարգերից անտեղյակությունը, մարզում մասնագիտացված բնապահպանական ՀԿ-ների խիստ սակավությունը, համայնքի անդամների օտարածությունը ՏԻՄ-ից ու Մարզպետարանից բնակչին իր խնդիրների հաճախ էլ ողբերգության հետ թողել է միայնակ, դարձրել չնախաձեռնող:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնապահպանական վճարների գումարներն ուղղորդելու և օգտագործելու հարցում ՏԻՄ հնարավոր սուբյեկտիվությունը կանխելու նպատակով համայնքի բոլոր սոցիալական խմբերի համար հնարավորություն ստեղծել բնապահպանական և առողջապահական ծրագրերի հաստատմանը մասնակցելու և իրականացումը վերահսկելու:
2. Համայնքի զարգացման ռազմավարական ծրագրում հատկացնել հատուկ բնապահպանական բաժին: Տարածաշրջանի երիտասարդ գիտակալտիվիստների խմբի և ՀԿ անդամների համատեղ ուժերով մշակել իրականացման պլան, ժամանակացույց և անհրաժեշտ ծախսեր, աղբյուրներ: Պլանը դնել Ախթալայի Ավագանու խորհրդի քննարկմանն ու հաստատմանը: Ստեղծել պլանի քայլերի իրականացումը և ծախսերը վերահսկող համայնքային անկախ մոնիթորինգային խումբ:
3. Ուժեղացնել համայնքի բոլոր բնակավայրերի բուժճառայությունները կադրերով և տեխնիկայով: Ըստ երեխաների առողջության վրա թողած վնասների Կոմբինատի հաշվին նախադպրոցական և դպրոցական տարիքի

յուրաքանչյուր երեխայի տրամադրել ուժեղացված սննդամթերքի ամենօրյա փաթեթ:

4. ՏԻՄ-ի, մարզպետարանի, տարածքային զարգացման խնդիրներով զբաղվող կառավարության օղակների համատեղ գործունեությամբ իրականացնել տարածաշրջանում առկա աշխատուժի գնահատում, տեղում հանքին այլընտրանք աշխատատեղերի հնարավորությունների բացահայտում, միջին մասնագիտական ուսումնարանների վերապրոֆիլավորում կամ ստեղծում և այդ աշխատանքների պլանավորում:
7. Մկսել նախկինում պոչամբարի տարածքի անհաջող ռեկուլտիվացիայի պատճառների ու հետևանքների վերացման ու մոտ ապագայում համայնքին իր հողերի վերադարձման գործընթացները:



Անհաջող ռեկուլտիվացիա, Նազիկ պոչամբար

8. ՀԿ անգնահատելի ռեսուրսն օգտագործել բնակչության գիտակցված մասնակցային վարքի ձևավորման, ԱՃԹՆ գործընթացներում նրա ընդգրկվելու հնարավորությունը մեծացնելու, ՀԿ-բնակչություն-կոմբինատի ղեկավարություն ուղիղ քննարկումներ կազմակերպելու գործում: